«ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ապրիլի 14-ին ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում «Կառավարչական հմտություններ» թեմայով կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ անգլերեն լեզվով:

Նախաձեռնության հեղինակը տնտեսագիտության տեսության ու կառավարման ամբիոնի դասախոս Մարիաննա Խաչատրյանն էր, իսկ խաղի մասնակիցները՝ կառավարում 3-րդ կուրսի ուսանողները:

Խաղն ընթացավ 3 փուլով:

Առաջին փուլի ընթացքում ուսանողները պետք է կարողանային արագ ու ճիշտ պատասխանել Kahoot կրթական կայքով կազմած հարցերին:

Երկրորդ փուլում տրված էր ներդրումներ իրականացնելու 2 տարբերակներ, և ուսանողները պիտի հաշվարկեին, թե որ նախագծերն են քիչ ռիսկային ու նպատակահարմար:

Երրորդ փուլը "Elevator pitch" էր Իլոն Մասկի հետ. ուսանողները 3 րոպեի ընթացքում պիտի կարողանային ներդրողին ներկայացնել իրենց բիզնես նախագիծը՝ հետապնդելով ֆինանսավորում ստանալու նպատակ:

Խաղը բավականին հետաքրքիր էր ու նորարարական լուծումներով էր:

«Ժամանակին համահունչ շարժվելը ներկայումս կարծես պարտադիր պայման է դարձել հաջողության հասնելու համար: Ե՛վ մենեջմենթը որպես մասնագիտություն, և՛ անգլերեն լեզուն, երկուսն էլ ներկայումս բավականին պահանջված են, ու այս երկուսի միքսը հստակ կարող ենք դիտարկել որպես հաջողության հասնելու բանաձև:

Նման ֆորմատով խաղերը մոտիվացիայի բավականին ուժեղ աղբյուր են հանդիսանում: Խաղից հետո մեզ՝ խաղացողներիս մոտ մասնագիտական անգլերենի իմացությունը էլ ավելի բարելավելու մեծ ցանկություն է առաջացել»,-նշել է խաղի ակտիվ մասնակից Սվետլանա Մովսիսյանը՝ կարևորելով ուսանողության կյանքում նման միջոցառումների անհրաժեշտությունը:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելիր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»
№ 03(249)
ապրիլ-2023

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝
տխո՛ւր, դատարկ ու խավար,
Զարկվա՛ծ հայրենիք,
Զրկվա՛ծ հայրենիք:

Խռնվում են մտքիս հանդեպ բանակները անհամար,
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակների աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խընջույքներով արյունի,
Որ դարձրին քեզ մշտական սև ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժպիտ,
Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հնի.
Հառաչանքով սրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ պիտ ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ծըգտում է մեր հոգին՝
Հույսի՝ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հըզո՛ր հայրենիք...

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ

Ապրիլի 24-ին Ստեփանակերտի հուշահամալիրում Արցախի Հանրապետության բազմաթիվ քաղաքացիներ ծաղիկներ են խոնարհել Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող «Ձանգակատուն» հուշակոթողի պատվանդանին և հարգանքի տուրք մատուցել անմեղ զոհերի հիշատակին:

Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողությունը ևս ծաղիկներ են խոնարհել «Ձանգակատուն» հուշակոթողի պատվանդանին և հարգանքի տուրք մատուցել անմեղ զոհերի հիշատակին:

ՋԱՀԵՐՈՎ ԵՐԹ

Ապրիլի 23-ին ՀՅԴ Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ Ստեփանակերտում տեղի է ունեցել «Հիշե՛ք անցյալը, պաշտպանե՛ք ապագան» խորագրով ջահերով երթ, որը մեկնարկել է Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու բակից դեպի Եղբայրական հուշահամալիր:

Ջահերով երթին մասնակցել են ԱրՊՀ դասախոսներ և ուսանողներ:

ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Արցախցի Արման Ավանեսյանը Իսրայելում դարձավ մարտական սամբոյի Եվրոպայի չեմպիոն և հնչեցրեց Հայաստանի օրհներգը:

Արման Մխիթարի Ավանեսյանը ծնվել է 1999 թվականի դեկտեմբերի 24-ին Ստեփանակերտ քաղաքում: Սովորել է ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղում: Ավարտելով դպրոցը՝ Արմանը 2017 թ. ընդունվել է ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինասներ /ըստ ոլորտի/» մասնագիտության առկա բաժին, այժմ սովորում է 4-րդ կուրսում: 2018թ- 2020թ. գտնվել է զինծառայության մեջ:

Հայրենիքի նվիրյալ զավակ Արման Ավանեսյանը իր ներդրումն է ունեցել և շարունակում ունենալ հայրենիքի պաշտպանության սուրբ գործում: Արման Ավանեսյանին մաղթում ենք նորանոր հաջողություններ:

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»-Ի Տ ԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ամփոփվել են մարտի 30-ին ԱրՊՀ-ում բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի նախաձեռնությամբ «Մաթեմատիկա» առարկայից տեղի ունեցած օլիմպիադայի արդյունքները: Օլիմպիադային մասնակցել է հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարանների մոտ երեք տասնյակ աշակերտ:

Ապրիլի 6-ին բուհում կայացել է պարգևատրման արարողություն, որի ընթացքում պատվոգրեր, գրքեր և խորհրդանշական նվերներ են հանձնվել մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտներին:

Մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.թ. Գայանե Պետրոսյանը, շնորհավորել է աշակերտներին՝ օլիմպիադայում գոհացուցիչ արդյունքներ արձանագրելու համար և հույս հայտնել, որ աշակերտները մասնագիտական կողմնորոշման հարցում և բարձրագույն կրթություն ստանալու համար կընտրեն Արցախի պետական համալսարանը՝ համալրելով ԱրՊՀ ուսանողների շարքերը:

Բնագիտական ֆակուլտետի դեկան, քիմիական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Վոլոդյա Միրզոյանը ևս շնորհավորել է մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտներին՝ շնորհակալություն հայտնելով օլիմպիադայի կազմակերպիչներին, աշակերտներին և դասավանդող ուսուցիչներին:

Օլիմպիադայի արդյունքները՝ ստորև

9-10-րդ դասարաններ՝

1-ին տեղ -Հարությունյան Մարիամ Արայիկի, «Արցախի Անանիա Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիր, 10-րդ դասարան:

2-րդ տեղ - Լալայան Աննա Գնելի, ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղ, 10-րդ դասարան:

3-րդ տեղ - Գալստյան Սամվել Դավիթի, «Արցախի Անանիա Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիր, 10-րդ դասարան:

11-12-րդ դասարաններ

1-ին տեղ - Սահակյան Արսեն Դավիթի, Մարտակերտի Վլ.Բալայանի անվ. թիվ 1 դպրոց, 12-րդ դասարան:

2-րդ տեղ-Ղազիյան Լևոն Պավելի- ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղ, 11-րդ դասարան:

3-րդ տեղ -Հովհաննիսյան Արշակ Միհերի, Մարտակերտի Վլ.Բալայանի անվ. թիվ 1 դպրոց, 12-րդ դասարան:

ՕԼԻՄՊԻԱԴԱ՝ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻՑ

Ապրիլի 13-ին Արցախի պետական համալսարանում պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամբիոնի նախաձեռնությամբ և ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության աջակցությամբ տեղի է ունեցել «Հայոց պատմություն» առարկայից օլիմպիադայի 2-րդ փուլը: Օլիմպիադային մասնակցել են հանրապետության տարբեր համայնքների հանրակրթական դպրոցների 10-12-րդ դասարանների երկու տասնյակ աշակերտներ:

Օլիմպիադայի նախաձեռնող, պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ.,դոցենտ Նունե Սարումյանը, ողջունելով մասնակիցներին, կարևորել է պատմաբանի մասնագիտությունը սերունդների մեջ ազգային արժեհամակարգի ձևավորման ու ամրապնդման, ամենաբարդ ժամանակաշրջաններում անգամ ազգային ինքնության պահպանմանը նպաստելու տեսանկյունից:

Օլիմպիադան անց է կացվում թեստային եղանակով: Մասնակից աշակերտները, կարևորելով բուհում անցկացվող դպրոցական օլիմպիադաները, ընդգծել են դրանց նշանակությունը որպես իրենց գիտելիքների ստուգման լավագույն հարթակ:

«ԿԱՆԱՅՔ՝ ԱՐՑԱԽԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ



Ապրիլի 6-ին ՈՒԽ կազմում գործող Պանելային քննարկումների ակումբի և ՈՒԳԸ համատեղ ջանքերով կազմակերպվել էր «Կանայք՝ Արցախի հասարակական-քաղաքական կյանքում» խորագրով պանելային քննարկում:

Պանելային քննարկմանը հրավիրված էին ԱրՊՀ իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Տաթևիկ Գևորգյանը, լրատվության և հանրային կապերի բաժնի պետ, բ.գ.թ., դոցենտ Զարինե Սառաջյանը, ակտիվ երիտասարդ, ծրագրավորող Աննա Հարությունյանը:

Պանելային քննարկման նպատակն էր՝

-ներկայացնել Արցախում կանանց առաջնորդության և մասնակցության հաջողված օրինակները,

-բացահայտել կանանց մասնակցությունն ու առաջնորդությունը Արցախի զարգացման ու առաջընթացի վրա,

-քննարկել, թե ինչպես կարելի է ներգրավել և ոգեշնչել երիտասարդ կանանց և ակտիվ դերակատարություն ունենալ Արցախի քաղաքական ու հասարակական կյանքում:

Հանդիպմանը մասնակից ուսանողները, ներգրավվելով թեմայի մեջ, ուղղեցին իրենց հարցերը պանելիստներին: Ուսանողական ինքնավար կառույցների պատասխանատուները շնորհակալություն են հայտնել բանախոսներին՝ վստահեցնելով, որ նմանատիպ քննարկումները շարունակական կլինեն:

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ: ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱՐՄԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ապրիլի 13-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ ԱրՊՀ մարտական ակումբի և ՈՒԳԸ հետ համատեղ կազմակերպվել է համահամալսարանական սեմինար-պարապմունք «Տեղեկատվական պատերազմ: Տեղեկատվական-հոգեբանական պատերազմի վարման հնարները» թեմայով:

Միջոցառումը մեկնարկել է լռության րոպեով՝ հարգանքի տուրք մատուցելով ապրիլի 11-ին հայրենիքի պաշտպանության համար նահատակված մեր հերոս տղաների հիշատակին:

ՏՏ ոլորտի և «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողները ներկայացրել են «Տեղեկատվական պատերազմ», «Հոգեբանական պատերազմ», «Հոգեբանական ներգործություն», «Հոգեբանական մանիպուլյացիա» թեմաներով զեկուցումներ:

Կարևորելով թեմայի արդիականությունը՝ հոգեբանական կենտրոնի տնօրեն Անահիտ Գասպարյանը նշել է, որ տեղեկատվական-հոգեբանական պատերազմը միտված է մանիպուլյացիաների, ապատեղեկատվության և հոգեբանական ճնշման միջոցով բացասական ազդեցություն գործել հակառակորդ երկրի վրա կազմալուծման նպատակով:

Տեղեկատվական-հոգեբանական պատերազմներին դիմագրավելու համար անչափ կարևոր է նման ձևաչափով ու թեմատիկ ուղղվածությամբ միջոցառումների կազմակերպումը:

ԱրՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀՊՏՀ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Ապրիլի 13-ից 14-ը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի է ունեցել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Սալնազարյանի անվան ուսանողական գիտաժողով՝ «ՀՀ կապիտալի շուկայի կայացման ուղիներն ու հեռանկարները» խորագրով, որին առցանց եղանակով մասնակցել են նաև ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները՝ ֆինանսահաշվային աբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Ավանեսյանի և նույն ամբիոնի դասախոս, տ.գ.թ. Արևիկ Ալեքսանյանի ղեկավարությամբ:

Ուսանողներ Մարիամ Վահանյանը, Լարիսա Գրիգորյանը և Աննա Ղահրամանյանը հանդես են եկել «ԱՀ-ում գործող ֆինանսական միջնորդների գործունեության վերլուծությունը 2012-2021թթ.» թեմայով զեկուցմամբ, Լիլիթ Գրիգորյանը՝ «Բաժնետոմսերի շուկան՝ որպես ՀՀ կապիտալի շուկայի զարգացման շարժիչ գործոն», Օքսաննա Մկրտչյանը՝ «ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի վերլուծությունը և զարգացման հեռանկարները» թեմաներով:

Գիտաժողովին մասնակցած ուսանողներին շնորհվել են հավաստագրեր և նվերներ:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում ամփոփվել են ավարտական խմբերի փորձուսուցման արդյունքները:

Միջոցառմանը ներկա էին ֆակուլտետի ղեկավար կազմը, դասախոսներ, փորձուսուցման ղեկավարներ, փորձուսուցման անցկացման վայրերի պատասխանատուներ, ուսանողներ:

Ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները հաջորդաբար ներկայացրել են փորձուսուցման յուրաքանչյուր վայրում ստացած արդյունքները, կատարել առաջարկություններ:

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ուսանողները փորձուսուցման արդյունքները համակարգել են տեսահոլովակների ձևով և ներկայացրել իրենց պրակտիկ այցելությունները Արցախի դիտարժան վայրեր և շեշտը դրել ներքին զբոսաշրջության զարգացման վրա: Ֆակուլտետի դեկանը կարևորել է փորձուսուցման արդյունքների նման ձևով ամփոփումը, ինչը հնարավորություն է տալիս զարգացնել ֆակուլտետ – գործատու հարաբերությունը:

ԱՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա.Մուսայելյանը բարձր է գնահատել ուսանողների տեսական պատրաստվածության մակարդակը, նրանց պատասխանատվությունը և ընդգծել, որ իրենց կադրային քաղաքականությունը իրականացնելիս պարտադիր հիմնվում են ֆակուլտետի ներուժի վրա:

ԱՀ ներդրումային հիմնադրամի աշխատակազմի ղեկավար Ա. Բաբայանը ևս դրական է արտահայտվել փորձուսուցման արդյունքներից և պատրաստակամություն հայտնել ուսանողներին հնարավորություն տալ ծանոթանալ համապատասխան կազմակերպությունների գործունեությանը նաև գործնական պարապմունքների ժամանակ:

«Վարանդա Թրայվել» ՍՊԸ տնօրեն Ա.Ադամյանն առաջարկել է, հիմք ընդունելով զբոսաշրջության առանձնահատկությունները, արտադրական փորձուսուցումը կազմակերպել ամառային շրջանում, երբ տուրիստական ծառայությունները լայն թափ են ստանում:

Նման ձևաչափով փորձուսուցման արդյունքների ամփոփման վերաբերյալ իրենց գոհացուցիչ խոսքն են արտահայտել ամբիոնի վարիչները, փորձուսուցման ղեկավարները, դասախոսները:

«ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՆՑԵԼ Է ՀԱԳԵՑԱԾ ՈՒ ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի «Տարրական կրթություն և մանկավարժություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների կիրառական փորձուսուցումը անցել է Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան համար 7 դպրոցում:

Դպրոցում ուսանողներին հնարավորություն տրվեց բուհում ստացած իրենց մասնագիտական տեսական գիտելիքները կիրառել պրակտիկայում՝ դասավանդելով 1-4-րդ դասարաններում: Փորձուսուցման ղեկավարները, ուսանողները, համագործակցելով դպրոցի փորձառու դասվարների հետ, մեծ պատասխանատվությամբ և բարեխղճությամբ նախապատրաստվում էին յուրաքանչյուր դասի:

Ուսանողների կողմից կազմակերպված դասերը անցնում էին հետաքրքիր, դասին ներկայացվող ժամանակակից պահանջներին համապատասխան, դասվարների հավաստմամբ՝ բարձր մակարդակով:

Ուսանողներն իրենց կցված դասարաններում կազմակերպել են բազմաբնույթ, հետաքրքիր միջոցառումներ: Ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվեց նաև համադպրոցական միջոցառում՝ նվիրված մայրության տոնին: Միջոցառմանը ներկա էին դպրոցի տնօրենը, փորձուսուցման մեթոդիստները, մանկավարժները, աշակերտների ծնողները: Դպրոցի տնօրենը գոհունակություն հայտնեց նման միջոցառման և ուսանողների մասնագիտական պատրաստվածության, պատասխանատվության, կազմակերպվածության համար՝ ընդգծելով, որ պատրաստ է ուսանողներին վստահելու ուսուցչի աշխատանքը դպրոցում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ԽԱՂԱՂ ԱԿՑԻԱ

Ապրիլի 7-ին Մայրության, գեղեցկության և Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնին Ստեփանակերտում արցախցի մայրերն ու աղջիկները խաղաղ ակցիա են կազմակերպել՝ քայլերթ իրականացնելով Ստեփանակերտից դեպի Շուշի տանող ճանապարհի սկզբնամաս:

Ակցիային մասնակցել են մայր բուհի հարյուրավոր ուսանողներ և դասախոսներ:

Ակցիայի մասնակիցները Ստեփանակերտի Զինվորական պանթեոն-հուշահամալիրում ծաղիկներ են խոնարհել զոհված հերոսների շիրիմներին և հարգանքի տուրք մատուցել նրանց հիշատակին, այնուհետև քայլերթով շարժվել դեպի Շուշի տանող ճանապարհի սկզբնամաս:

Ակցիայի միջոցով մասնակիցներն իրենց կոչերով ու ելույթներով ուղերձ են հղել միջազգային հանրությանը՝ բարձրաձայնելով արցախցու անկոտրում կամքը՝ հանուն ինքնորոշման իրավունքի, պահանջելով դատապարտել Ադրբեջանի ագրեսիան և Արցախը ապահայկականացնելու փորձերը, բացել կյանքի ճանապարհը, պաշտպանել մարդու հիմնարար իրավունքները, որոնք ոտնահարվում են Ադրբեջանի կողմից: Ակցիան ամփոփվել է Հայաստանի և Արցախի օրհներգերով:

ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ապրիլի 17-ին ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետում ամփոփվել են մանկավարժական ուղղվածության կրթական ծրագրերի ավարտական խմբերի փորձուսուցման արդյունքները:

Միջոցառմանը ներկա էին ֆակուլտետի ղեկավար կազմը, դասախոսներ, փորձուսուցման ղեկավարներ, փորձուսուցման բաժնի մեթոդիստներ, փորձուսուցման անցկացման վայրերի պատասխանատու մանկավարժներ, ուսանողներ:

Ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները ներկայացրել են փորձուսուցման վայրում ստացած արդյունքները, հնարավորությունները և կատարել առաջարկություններ:

Ֆակուլտետի դեկան, ք.գ.թ., պրոֆեսոր Վոլոդյան Միրզոյանը կարևորել է փորձուսուցման արդյունքների նման ձևով ամփոփումը, հանդիպում-քննարկում ծավալելը՝ ուսանողների, դասախոսների և ուսուցիչների մասնակցությամբ: Ողջունելով ներկաներին՝ նա շնորհակալություն է հայտնել փորձուսուցման վայր հանրակրթական դպրոցների տնօրենությանն ու ուսուցիչներին, ովքեր ուսանողներին հնարավորություն են ընձեռել ստացած գիտելիքները գործնականում կիրառելու, մասնագիտական կարողություններ ձեռքբերելու և զարգացնելու:

Ուսուցիչներն իրենց հերթին գոհունակություն են հայտնել ուսանողների մասնագիտական գիտելիքներից ու նրանց՝ նոր գիտելիքներ, հմտություններ ձեռքբերելու պատրաստակամությունից:

Դեկանի խոսքով՝ քննարկման ընթացքում ուսանողների հնչեցրած առաջարկությունները կուսումնասիրվեն և արդյունավետ որոշումներ կկայացվեն:

Վերջում ուսանողները շնորհակալություն են հայտնել դասախոսներին և ուսուցիչներին՝ փորձուսուցումն արդյունավետ կազմակերպելու համար:

ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Պատմության և իրավագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ «Պատմություն» և «Կերպարվեստ» կրթական ծրագրերի ավարտական կուրսերի փորձուսուցման ամփոփիչ քննարկումը:

Ուսանողները հանդես եկան համառոտ զեկուցումներով, ներկայացրեցին փորձուսուցման նշանակալից դերակատարությունը՝ որպես մասնագետ կայանալու գործում, կատարեցին առաջարկություններ: Շրջանների համայնքներում փորձուսուցում անցկացրած ուսանողները նույնպես հանդես եկան իրենց համայնքների կրթօջախների մասին տպավորություններով՝ ներկայացնելով փորձուսուցման արդյունքները: Ամփոփիչ խոսքով հանդես եկան նաև փորձուսուցման ղեկավարները:

«Մանկավարժի մասնագիտությունը պարտավորեցնող է, նրա ափերում է մատաղ սերնդի հետագա կայացումն ու ճիշտ արժեհամակարգով նրանց ուղղորդելը»,- նշեց պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Արմինե Խաչատրյանը՝ համոզմունք հայտնելով, որ ԱրՊՀ շրջանավարտները կլինեն մատաղ սերնդի համար ճիշտ արժեհամակարգ ձևավորող և ամրապնդող մանկավարժներ: